ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

0728 ՀՀ Արարատի մարզ Գ.Մրգավետ Հեռ. 0235\6-33-55 , 6-33-11 Բջջ. 093-30-30-32, էլ. փոստ Mrgavet@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

<< 24 >> դեկտեմբերի 2012 թվականի թիվ 15

ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վարձավճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 17-րդ հոդվածի դրույթներով՝

Ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի տուն , այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական արտադրական նշանակության օբյեկտների համար. - 15000 դրամ:

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտի համար.

բա. 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար. - 30000 դրամ:

բբ. 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար. - 50000 դրամ:

բգ. 1001-ից ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար. - 70000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար.

գ. մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 3000 դրամ.

դ. 20 և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 5000 դրամ.

2.Համայնքի Վարչական տարածքում շենքերի շինությունների. քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար. եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով.

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետ օյբեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի կիրառում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով.

բ. նախատեսվում է միայն կցակառույցների շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1- ին կետով սահմանված նորմերը:

3 .Համայնքի Վարչական տարածքում շենքերի շինությունների. քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք է սահմանվում - 5000 դրամ
1-ին, 2-րդ, 3-րդ կետերով դրույքաչափերը հաշվարկվում են 0,5 գործակցի կիրառմամբ:

4. Համայնքի տարածքում՝

ա.ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3750 դրամ

բ.Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3750 դրամ:

5. Համայնքի տարածքում(բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 10000 դրամ

6. Համայնքի տարածքում՝

ա. բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրը - 350 դրամ.

բ. Հեղուկ վառելիքի տեխնիկական հեղուկների. հեղուկազտված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի տեխնիկական հեղուկների, հեղուկազտված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար - 150000 դրամ.

7.Համայնքի տարածքում առևտրի հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները) խաղատները ժամը 24-00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար - 50000 դրամ
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտ - 50000 դրամ
գ. բաղնիքներ (սաունաների) համար - 300000 դրամ
դ. խաղատների կազմակերպման համար -1.000000 դրամ
ե. շահումով խաղերի կազմակերպման համար - 500000 դրամ
զ. վիճակախաղերի կազմակերպման համար - 150000 դրամ

8.Համայնքի տարածքում յուրաքանչյուր անսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քմ-ի տեղական տուրք է սահմանվում՝

ա. ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 2000 դրամ

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 3500 դրամ

գ. Այլ արտաքին գովազդի համար - 1500 դրամ

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը - 1000 դրամ

10. Տնամերձ հողամասերի և սեփականաշնորհված հողերի չափագրման համար տեղական տուրք սահմանել - 1000 դրամ

11. Տնամերձ հողամասերի աճուրդ վաճառքին մասնակցելու մուտքի վճար- 500 դրամ

12. Աղբահանության տեղական վճար՝ մեկ շնչի համար սահմանել ամսեկան 10 դրամ:

Ավագանու անդամներ՝

Ա. Արշակյան

Ա. Անդրեասյան

Ա. Բարության

Ա. Գևորգյան

Ց. Դախչյան

Ս. Մարտիրոսյան

Ա. Ներսիսյան

Համայնքի ղեկավար՝ Լ. Աբրահամյան

Աշխատակազմի քարտուղար ժ/պ՝ Ա. Մեսրոյան